

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԹ.

20 ՄԱՐՏ 1881



Կ. ՊՕԼԵՍ

1881

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
20 ՄԵՐՃԱՆԵՐ ՐԻՂՏԻ ԷՖԵՆՏԻ ԽԱՆԻ ՆԵՐՔԵ. ՔԻ. 20

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅԲ ԴԻԻԱՆ

Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւնայեպ
Աւարեղ էֆէնտի Ալթուն Տիւրքի	Բ. »
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւնայեպ
Միհրան էֆէնտի Զօպանեան	Բ. »

Ձեռնասուրբեան դիւան | **Ցարաբերութեան դիւան**

Հովհաննէս Գահանայ Մկրեան Ա. Գ. Միհրան էֆէնտի Զօպանեան Ա. Գ. Նշան էֆէնտի Օտեան Ա. Գ. Սեպուհ էֆէնտի Թիւրապեան Ա. Գ.

Դաստիակութեան դիւան | **Իրաւասութեան դիւան**

Կէթէոս էֆէնտի Պէրպէրեան Ա. Գ. Յարութիւն էֆէնտի Թիւլեան Ա. Գ. Գասպար էֆէնտի Զերազ Ա. Գ. Տեղեմար էֆէնտի Լքսէրճեան Ա. Գ. Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան Ա. Գ.

Կարուածոց դիւան | **Նախաձեռնութեան դիւան**

Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Ա. Գ. Ղազար էֆէնտի Հովուեան Ա. Գ. Յակոբ էֆէնտի Նէմէնիճեան Ա. Գ. Նզիաղար էֆէնտի Մելիքեան Ա. Գ. Համարակարութեան դիւան Ա. Գ. Մինաս էֆէնտի Գալուստեան Ա. Գ.

Յակոբ էֆէնտի Սըշակ | **Խմբագրութեան դիւան**

Մանուկ էֆէնտի Փալատեան Ա. Գ. Կարապետ էֆ. Խլթիւճեան Ա. Գ. Պօղոս էֆէնտի Թորգոմեան Ա. Գ. Մկրտիչ էֆէնտի Մելիքեան Ա. Գ. Սարգիս էֆէնտի Մուրատեան Ա. Գ.

Ելեւածից յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան Ա. Գ. Մկրտիչ էֆէնտի Մելիքեան Ա. Գ. Միհրան էֆէնտի Զօպանեան Ա. Գ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԹ

Ն Ի Ս Տ Ժ Թ.

20 ՄԱՐՏ 1881

ՆՈՒՍԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Ա. Վ. Իճակ	ԳՆԱՄԳԱՐՈՒ ԿԵՏԻԿ ՓԱՂԱ ԵՆ ԳՆԱՄԳԱՐՈՒԻ ՂՈՒՐԱ	47 Յ. Շիշմանեան Տօքթօր
1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ Պ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ	49 Միհրան Պահճէգափուլեան	Իսկիւտար Ս. Կարապետ
2 Սիմօն Եպս. Սէֆէրեան	22 Կարապետ Աղարդմաճեան Բ 2	50 Պօղոս Թորգոմեան Բ	Միհրան Պահճէգափուլեան
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ	23 Համբարձում Մազպուլեան Բ	51 Տրդատ Փափազեան	Պօղոս Թորգոմեան
4 Կարապետ Բ. Սէթեան	24 Մինաս Գափամաճեան	52	Տրդատ Փափազեան
	25 Սարգիս Աղարէկեան Բ Պ		(Գ. Վ. Իճակ)
	26 Սենեքերիմ Մանուկեան Բ Պ		Գասքմ բաշա
5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան	27 Բարթող Բիւրքճիպաշեան	53 Գասպար Զէրազ	Բ
6 Պօղոս Վ. Խօլտամեան Բ Պ	28 Գէորգ Ալտուլաշեան	Բերա	
7 Յովհաննէս Գ. Մկրեան	29 Յ. Մերեւէմ-Գուլի	54 Աբիկ Ունճեան	Բ Պ
8 Գրիգոր » Աճէմեան Բ	30	55 Գրիգոր Սէլիմիճեան	Բ Պ
	31	56 Գրիգոր Օտեան	Բ Պ
	32	57 Միքայէլ Մօմճեան	Բ 2
9 Յակոբ » Ա. Փափազեան	33	58	
10 Սահակ Գ. Տ. Սարգսեան Բ Պ	34	59	
11 Խորէն » Փէհլիվանեան	35	60	
12	36	61	
	37	62	
	(Բ. Վ. Իճակ)		
	Պեշիկբաշ		
	38 Ալիքսան Խօրասանճեան	63 Յակոբ Նորատուկեան	
	39 Բարսեղ Հալաճեան	64 Տիգրան Եռասոփեան	
	40	65 Մկրտիչ Գազանճեան	Բ
	ԵՆԵՐԻՊԱՐՈՒ	66 Նշան Օտեան	Բ
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ 2	41 Մկրտիչ Բիւրքճիպաշեան Բ Պ	67	
18 Յովհաննէս Վ. Փափազեան	42 Մարուգէ Յրէնկեան	68 Պեշոգ Ե. Ղարափա	
19 Գարեգին » Թաթարեան Բ	43 Պօղոս Լքսէրճեան	Միքայէլ Մամիկոնեան Բ	
20	44	(Գ. Վ. Իճակ)	
	Իսկիւտար Ս. Խաչ	Գուրգուսեան Ե. Իճակ	
Բ Բացակայութիւն առաջին :	45 Սիմօն Յէլէկեան	69 Ստեփան Պէլիկճեան	Բ
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :	46	70	
Բ. Պ Բացակ. բանաւոր պատճառաւ :			



Գատըգիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Մկրտիչ Մուրատեան	Բ 2	121 Ստեփան ֆախաղեան
72	Կարին	Տիվրիկ
Նարլըգաբու	101	122 Նշան Գարագաշ
73 Յակոբ Եղմէնիճեան	Բ 2	Զէյրուհ Է. Մարաշ
Եհնիմահալի Սամարիոյ	102	123
74	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգափու	103	124
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուսպ Ս. Եղիա Է. Ս.	104	125 Մելքօն Իսկէնտէրեան
Աստուածածին	Կարապետ Ս. Իւթիւճեան	Բ Պ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105	Տիգրանակերտ
Գոնրուչեղմէ	Ղարահիսար	126 Միհրան Զօպանեան
77 Աստիա Իկիտպաշեան	106	Վան
Հիսար Է. Պօյաճի գիւղ	Արաբկիր	127
78	Կարապետ Իսաչիկեան	Ադրամար
Նոր գիւղ Է. Սրէնիա	107	128
9 Ղազար Հովուեան	Բաղէշ	Հալեպ Է. Այնթապ
Պալատ	108	129
80 Տելեմաք Էքսէրճեան	Պրուսա	Սէբաստիա
81	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
82	Եւդոկիա	Ռուսճուգ
Քարակեօմրիկ	Ամասիա	131
83 Սեպուհ Թիւրապեան	111 Համբարձում Ալաճաճեան	Կարս
84	Բայու	132 Աբրահամ Յ. Այվաղեան
(Ե. Վիճակ)	112 Յովհաննէս Ազնաւորեան	Զմշկածագ
Սամարիա	Եղեսիա	133 Համբարձում Սարըքէշիճեան
85 Ալիքսան Պէշիրեան	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
86 Եղիազար Մէլիքեան	Մանճրլըխ	134
87 Մինաս Ճաֆճաֆեան	114	Ատանա
88 Նազարէթ Շահպաղեան	Հաճըն	135
89 Յարութիւն Թիւլեան	115	Սդերդ
90 Յակոբ Արշակ	Երզնկա	136 Մատթէոս Ալէքսանեան
91 Սեպուհ Թիւրսիւղեան	116 Ռէթէոս Պէրպէրեան	Բ 2
92	Թեքիրտաղ	Եօզղատ
93	117 Տիգրան Գ. Սինանեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
94	Բ Բ	Մալաքիա
Խասգիւղ	Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան
95 Առաքել Ալթուն Տիւրրի	118 Գէորգ Գըլըճեան	Բ
96 Ռէթէոս Պէշիրիկեան	Բ	Իզմիր
97 Սարգիս Քալուքճեան	Բ	139 Պապի Պապօեան
98	119	Բ
99	Պալըքեաթ	Եգիպտոս
100	120	140 Աբրահամ Մուրատեան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Ծրագիրը Թաղային մատակարարութեան (Տեղեկագիր Ատենապետաց դիւանի) :
- Բ. Առաջարկութիւն Մայր դիւանի Ժողովոյ դումարման աւուրց փոփոխութեան մասին. — Տեղեկագիր Ատենապետաց դիւանի :
- Գ. Առաջարկութիւն Մայր դիւանի Ժողովոյ ներկայելի գրութեանց մասին. — Տեղեկագիր Ատենապետաց դիւանի :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ընդ նախագահութեամբ Ա. Ս. Պատրիարք Զօր և ընդ ատենապետութեամբ Մէրեթ — Գուլի Յ. Էֆէնտիի՝ ատենաքուրսու Երեւանի թիւ 7 3/4-ին ի ներկայութեան 30 երեսփոխանաց՝ որոց թիւն հետզհետէ 42 ի յանգեցաւ :

նազրութիւնները վաւերացուած էին, և հետեւապէս դիւանին վրայ դեռ վաւերելի կը մնային չորս նիստերու ատենադրութիւններ, սկսեալ ԺԵ. անբաւական նստին ատենադրութեանէն՝ որ նկարագրական ձևով խմբագրուած էր, նախ անոր վրայ ի դիտողութիւն հրաւրեց երեսփոխաններն : Եւ ժողովն առանց դիտողութեան ԸՆԴՈՒՆԵՑ զայն :



1.

Վաւերացում ԺԵ. ԺԶ. ԺԷ. Է. ԺԸ. նիստերու ատենադրութեանց

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ անցեալ նիստին մէջ մինչև ԺԴ. նստի ատեն

Յետոյ Ատենապետ Էֆէնտին ԺԶ. նստի ատենադրութեան վրայ դիտողութիւն ունեցող երեսփոխաններն հրաւիրեց խօսք առնուլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 388, սիւնակ Բ. 9րդ տողին մէջ որովհետեւ բառն սխալ տի ըլլայ այսուհետեւ :

Նոյն երես , նոյն սիւնակ , 26 ըջ տողին մէջ պիտի տանք պիտի ըլլայ պիտի տա՞նք :

Երես 394 , սիւնակ բ. 12 ըջ տող . Արքազան Պատրիարք Հօր յայտարարութիւնը սխալ արձանագրուած է : « Ես այն ատենները երբ դաստիարակութեան համար Կեդր. սընտուկէն գումար մը տալ կառաջարկուէր , ըսած եմ թէ այդ գումարը քիչ է , սակայն առ այժմ բաւական է ըսողներ եղան , թէ փորձ մ'է թող ըլլայ , և Պիւտձէին մէջ գումար մը սահմանուի , այդ գումարը ևայլն » խօսքը պիտի ըլլայ « Ես այն ատենները երբ դաստիարակութեան համար Կեդր. սնտուկէն 50000 զրջ վճարելու որոշում կըլլար , ժողովին ըսած եմ թէ այդ գումարն անկարելի է վճարել , մինչև որ հասութից աղբիւրները չկարգադրուին . ահա այդ գումարը ևայլն » : Արքազան Հօր այս խօսքն յիշատակած եմ իմ խօսքիս մէջ տես 398 , սիւնակ բ. 9—13 տողերուն մէջ :

Երես 394 , սիւնակ բ. առաջարկեալ բարեփոխման մէջ մայիս 15 թուականը՝ մայիս 1 պիտի ըլլայ ըստ յայտարարութեան Տնտեսական խորհրդականին . տես երես 387 սիւնակ ա. 20 ըջ տող :

Երես 396 , սիւնակ ա. բուհարկութեան արձանագրութիւնն ամբողջովին սխալ է . առաջարկեալ բարեփոխումն ըստ վերջին առաջարկութեան Մէրեէմ—Գուլի էֆէնտի ժողովը նոյնութեամբ ընդունեց : Աէտք է ճշդել այս արձանագրութիւնն ասարդային շիօթութեան տեղի չթողելու համար :

Երես 397 , սիւնակ ա. Մէլիքեան Գարեգին էֆէնտի խօսքին 18 ըջ տողին վերջն պիտի աւելնայ , « այսօր սրաշտոնէից ամենուն թոշակներն վճարեալ են , և Կեդր. սնտուկը պարտք չունի » . Տես երես 398 , սիւնակ ա. 35—37 տողերն և երես 399 , սիւնակ ա. 21—23 տողերն , յորս կրկնած եմ Մէլիքեան Գ. էֆէնտի այդ խօսքերն , որ մոռցուած են իր խօսքին արձանագրութեան մէջ :

Երես 397 , սիւնակ բ. Արքազան Պատրիարք Հօր երկրորդ խօսքն պիտի ըլլայ . « Ես շնորհակալութեան պէտք չունիմ . իմ նախորդներս ալ իրենց այդ պարտքը կատարած են արդեօք » :

Երես 398 , սիւնակ բ. 3 ըջ տող , մինչդեռ պիտի ըլլայ մինչեւ իսկ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ես այդ ատենագրութեան ամբողջութեանը վրայ դիտողութիւն ունիմ . իմ խօսքերուս իմաստը բոլորովին պլախփեալ է . բերանս այնպիսի խօսքեր կան դրուած զորս ես չըսի և սակայն չեմ յիշեր հիմայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ կը ցաւիմ որ՝ Դիւանիս այնչափ հոգատարութեան հակառակ ատենագրութեանց մէջ երբեմն այնպիսի սըխալներ կը սպրդին , որ խօսքին իմաստը կայլայլեն : Եւ ըստ որում սղագրութիւն չունիմք , հարկադրուած եմք գոհ լինիլ այսչափով :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ես աւելի մէկ կէտի վրայ դիտողութիւն ունիմ , որ տարագրական սխալ մ'է . 396 երես , բ. սիւնակ 32 ըջ տող . կարելիութեանը պիտի ըլլայ կարելիութիւնը :

Իսկ գալով իմ այն խօսքերուն զորս փափաղեան էֆէնտին ճշդել կուզէ , ես այնպէս կը մըրճեմ զանոնք՝ ինչպէս որ արձանագրուած են ատենագրութեան մէջ : Նմանապէս 396 ըջ երեսին մէջ նշանակեալ բուհարկութիւնը ես ճիշդ արձանագրութեան պէս եղած գիտեմ , և ոչ թէ փափաղեան էֆէնտին սրբագրութեան պէս : Եւ այն կէտը թէ Պատրիարքարանն այսօր պարտք չունի ըսած եմ , նախնըթաց բայատրութեանց հետ սերտ կապակցութիւն ունի խօսքս , և ամբողջն իմիասին տունելով անոր բուն ոգին կը մըրճուի , սակայն երբ այնպէս մեկնուի , ինչպէս մեկնեց փափաղեան էֆէնտին , խնդիրը կը փոխուի . վասն զի երբ խօսք մը սեղմեալ կերպով մեկնուի , տարբեր

իմաստ կուտայ : Իմ այն խօսքս թէ՛ Պատրիարքարանը պարտք չունի , յարաբերական իմաստով պէտք է աւելուլ , և ոչ թէ բացարձակ իմաստով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — ԺԳ. նստի ատենագրութեան վրայ դիտողութիւն ունեցող երեսփոխանք իրենց խօսքերու մասին դիտողութիւնն ըրին և վերջացուցին : Բայց ասոնցմէ զատ կարևոր կէտ մը կար , բուհարկութեան արձանագրութեան նկատմամբ , որուն համար փափաղեան էֆէնտին սխալ արձանագրուած է կըսէ , իսկ Մէլիքեան էֆէնտին ուզիզ : Ասոյք է որ նոյն օրն իմ խօսքիս վրայ խնդիրը բուհարկութեանը է , և իմ եզրակացութեանս մէջ՝ բարեփոխման երկրորդ մասը դուրս ձգել չկարի վերայ այս ամենայնի՛ ըստ որում նոյն նըստին ատենապետն ես չէի և չեմ կրնար գիտնալ թէ ատենապետն , որ Քրիստոստուր էֆէնտին էր , ինչ ամիսփմամբ բուհարկութեանը , հարկ կը լինի նախապէս նորս բացատրութիւնը լսել , և ըստ որում այժմ ներկայ չէ Քրիստոստուր էֆէնտին , կը վերապահեմք այս կէտն անոր ներկայութեան , որպէս զի խնդիրը պարզաբանէ : Ուստի՛ այն վերապահմամբ՝ ժողովոյդ ընդունելութեան պիտի ենթարկեմ ժԳ. նստի ատենագրութիւնն , անոր վրայ եղած դիտողութեանց ապացուցեալ մասերովն հանդերձ :

Հետևաբար Ատենապետ էֆէնտին սոյն բանաձևով բուհարկ կը ընէ ժԳ. նստի ատենագրութիւնն զոր ժողովը կ'ընդունի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցնինք այժմ ժԷ. նստի ատենագրութեան . դիտողութիւն ունեցող երեսփոխանները կը հրաւիրեմ խօսք առնալ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 443 , սիւնակ

բ. իմ խօսքիս սա մասը . « Ղիւրին չէ յիշել նախորդ նիստերու մէջ խօսուածներն . բայց որովհետև ևայլն » պիտի ըլլայ , « Ղիւրին չէ յիշել իւրաքանչիւր նիստի մէջ խօսուածներն . ուստի ըստ որում ևայլն » :

Երես 427 , սիւնակ բ. 9 ըջ տողին « մարտ 15 պիտի ըլլայ « մայիս 15 » :

Երես 431 , սիւնակ ա. Մէլիքեան Գարեգին էֆէնտի խօսքին մէջ թերի մաս մը կայ , զոր պէտք է ամբողջացնել իմ խօսքէս , որ յերես 433 , սիւնակ ա. 29—32 տողերուն մէջ կերևայ թէ . « Պահ մ'առաջ վարչութիւնն յայտարարեց թէ 7—8 նիստ Պատրիարքարանի պաշտօնէից խնդրով զրաղած են , և թէ՛ Պատրիարքարանի մէջ անպիտան պաշտօնեաներ կան արդարև » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ ժԷ. նստին ատենագրութեան վրայ ուրիշ խօսք ուղղ չկայ : Չայն ընդունելութեան դնելէ առաջ՝ Դիւանս դիտել կուտայ որ այդ ատենագրութեանց թերթերուն մէկ մասին սկիզբը տալագրական սխալմամբ ժԳ. նստի ցանկն ու օրակարգը դրուած է : Արդ այս դիտողութեամբ հանդերձ ժԷ. նստին ատենագրութիւնը ժողովոյդ ընդունելութեանը կենթարկեմ :

Ժողովը միաձայն կ'ը ՎԱԻԵԲԷ ԺԷ. նստին ատենագրութիւնը հանդերձ դիտողութեամբ :

Ատենապետ էֆէնտին ժԸ. նստին ատենագրութեան վրայ ի դիտողութիւն կը հրաւիրէ զերեսփոխանս :

ԳԱՓԱՄԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 459 , իմ խօսքիս մէջ ամբողջ պարբերութիւն մը մոռցուած է որ է « Եթէ տեղեկագրին եզրակացութիւնն ընդունելով բուհարկ դնենք՝ այն ատեն զեղծումները քաջալերած կը լինինք » :

ԳԱՐԱԳԱՆ Ե. ԷՖ. — Երես 459 . ես չըսեմ թէ յանցաւորներն ուստիկանութեան յանձնելու է . այդ խօսքը պիտի ըլլայ « Ո՞վ կըս-

տիպէ դմեղ յանցաւորներն ուստիկանութեան յանձնելու » :

Տ. ՄԱՏ. ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Երես 459 . եթէ լաւ կը յիշեմ, ես Եուսուֆեան է. ֆէնտիի խօսելէն ետքը դիտողութիւն ըրի թէ՛ « Երբ քննութիւն ըլլայ՝ այն ատեն պիտի յայտնուին յանցաւորներն . ուստի բանի որ այսօր չենք կրնար գտնել զանոնք, ի՞նչպէս կրնանք պատժել » այս խօսքերս չեն արձանագրուած :

ԷՆՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Երես 451, սիւնակ Բ. — Իմ խօսքերս շատ սլաղ արեամբ շարադրուած են . ով որ դիւ կը ճանչնայ և նոյն օրն իմ յուզեալ կերպարանքս դիտած է, կըրնայ հասկնալ թէ ես այդչափ արագ արեամբ չէի կրնար խօսիլ, մանաւանդ թէ բարեմտարար ուղղուած հարցում մը չէի նկատեր փափագեան էֆէնտիին այն հարցումը թէ դատարարական թեան համար որոշուած գումարն ինչո՞ւ հատուցուած չէ նախորդ վարչութեան օրով : Ես ըսի թէ « փափագեան էֆէնտին նախորդ վարչութեան յանցանքն ինչո՞ւ Ս. Պատրիարք շօր կը բեռնաւորէ . նախորդ վարչութիւնն շատ լու է բրեր որ չէ վճարեր դատարարական թեան յատկացեալ գումարը . դատարարական թեան համար ծաղրելի ծրագիր մը չիմուած էր » ըսած եմ . փոխանակ այս ծաղրելի բանին կէտեր դրուած են ատենագրութեան մէջ : Ես այն ատեն դեռ շատ բան պիտի ըսէի, բայց Ատենագրեալ էֆէնտին չթողուց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 438, սիւնակ Ա. Ժ. Գ. նիստի վրայ դիտողութիւններս սխալ նշանակուած են, զորս հետեւեալ կերպով կուղղեմ .

« Երես 341, սիւնակ Ա. հարցապնդմանս 3րդ տողին 8 թուանշանը պիտի ըլլայ 18րդ :

Երես 343, սիւնակ Բ. 8րդ տողին մէջ բառն սուերորդ է :

Նոյն երես, նոյն սիւնակ, 21րդ տողին մէջ « չկրցաւ մարմնաւորիլ » պիտի ըլլայ :

Երես 344, սիւնակ Ա. 12րդ տող « պէտք է հոգ տանիք » պիտի ըլլայ, և ոչ թէ տանիք :

Նոյն երես, նոյն սիւնակ, 24րդ տող, Գաւակի բառն պիտի ըլլայ Մասնակի :

Երես 455, սիւնակ Ա. Եուսուֆեան է. ֆէնտիի խօսքէն յետոյ խօսք մ'ունիմ որ չէ արձանագրուած. « բայց Սրբազան Պատրիարքն ալ պէտք է որ այդ յայտարարութիւնն ընէ » :

Այս խօսքիս Եուսուֆեան էֆէնտին պատասխանեց թէ. « երբ վարչութիւնը կը յայտարարէ, Սրբազան Պատրիարքն ալ անոր համարի է ըսել է » :

Սրբազան Պատրիարքն ալ ներկայ էր նոյն միջոցին :

Երես 458, սիւնակ Ա. 14րդ տողին Պատրիարքարան պիտի ըլլայ՝ Պատրիարքն :

Երես 459, սիւնակ Ա. խօսքիս վերջը պիտի կցուի, « և մինչև ուստիկանութեան յանձնելու և արտօրելու կեղնեն » :

Երես 460, սիւնակ Բ. 2րդ տող. Միայն վարչութիւնը պատասխանատու չ'պիտի մնայ, այլ և Սրբազան Պատրիարքն որ Գործադիր իշխանութիւնը կը վարէ :

ԵՆՏՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Փափագեան է. ֆէնտիի ըսածները ճիշտ են, բայց այս դիտողութիւններն իւր այս խօսքերն ուղղելու համար կրնէ թէ ժողովոյ որոշումներն ու այլոց խօսքերը արագորեւելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իւրաքանչիւր երես, փոխան երբ իւր խօսքերը թերի արձանագրուած տեսնէ, զանոնք ամբողջացնելու համար դիտողութիւն ընելու իրաւունք ունի . սակից դուրս երբ այլոց խօսքերուն վրայ ալ տարած է իւր դիտողութիւններն, իբր իւր-խօսքին յարակից, այս դիտողութեանց այն մասը միայն կարեւորութիւն կրնայ ունենալ, որ խօսքին տիրոջ կողմէն կը հաստատուի, և կամ ժողովն համոզելու բաւական ասպնոցներով յա-

ռաջ կը դրուի . ասպ թէ ոչ, չեն կրնար խօսքին տէրը պարտաւորել եղած դիտողութիւններն ընդունելու :

Այս բացատրութենէն աւելի՛ մանաւանդ սա կէտին վրայ կուգեմ հրաւիրել Երեսփոխան տեսրոց ուշադրութիւնն որ, երբ իրենց խօսքերուն մէջ իմաստից փոփոխութիւն պատճառով թերութիւններ չգտնեն, լաւագոյն կը լինի դիտողութիւն ընելու չափ կարեւորութիւն չտալ և ժողովոյ վայրկեաններուն խնայել, վասն զի բանաւոր չէ այսչափ մանրակրկիտ դիտողութեանց ենթարկել ատենագրութիւն մ'որ իւրաքանչիւր երեսփոխանի խօսքերն իւր բերնէն ելածին յար և նման բառ առ բառ չնկրկայացներ, զի սղագրութեամբ պատրաստուած չէ, այլ անոր բովանդակութիւնը կուտայ, որուն մէջ անտարակոյս ամեն մանրամասնութիւն չկրնար պարունակիլ : Աւստի կըրնամք այնչափ խստապահանջ չլինիլ, մինչև որ սղագրութեան դրութիւնը մեր մէջ ալ գործածելի լինի : Կը տեսնէք որ մինչև իսկ իմ խօսքերուս արձանագրութեան մէջ ստէպ այնպիսի սխալմունք կը սարգին, զորս տարագրական վրիպակի ձեւով ուղղել կը պարտաւորուիք : Եւ վերջապէս անուրանալի է թէ առանց սղագրութեան այս ատենագրութեանց պատրաստութիւնը դժուարըմբեր գործ մ'է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ ցաւալի է, Երեսփոխան Տեսրք, որ բանի մը ատենագրութեանց մէջ տարագրական վրիպակներ սարգած են : Ատոյգ է որ իբրև Ատենագրութիւն պատասխանատու եմ, սակայն ես ալ իմ արդարացուցիչ պատճառներս ունիմ : Երբեմն ես ինքս կը կատարէի ամեն բան, նոյն իսկ տարագրութեան փորձերն . բայց ժամանակ մ'ի վեր բազմադիմի զբաղմանցս պատճառաւ չէի կրցած այս պաշտօնս կատարել և մանաւանդ ներկայութեան ցանկը ստիպուած էի Պատրիարքարանի դիւանատան պաշտօնէից պատրաստել տալ . սակայն ստուգեցի որ փոխանակ փորձառու անձանց յանձնելու սոյն գործն համբակներու

ձեռք կը ձգուին եղեր : Այս բացատրութիւնը տալէս ետքը կուգամ վստահեցնել զժողովոյ որ, այսուհետև անձամբ պիտի ջանամ գոհացնել այս մասին ինչպէս կընէի երբեմն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Լսեցիք Ատենագրութիւն էֆէնտին որ յայտարարեց թէ ներկայութեան ցանկին պատրաստութիւնը համբակներու ձեռք կը յանձնուի եղեր . ըսել է որ Պատրիարքարանի մէջ դեռ համբակ պաշտօնեաւեր կը գտնուին : Յուսով է որ այլևս վերջ կը տրուի այս անտեղութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենագրութեան պատրաստութեան և այլ գրութեանց համար՝ վարչութեան հետ համախորհուրդ՝ սխտք եղած կարգադրութիւններն արդէն եղած և գործը լաւագոյն ձամբու մէջ դրուած է, այնպէս որ Դիւանս իրաւունք ունի յուսալու որ այսուհետև տեղի չեն ունենար այս տեսակ ո՛չ թերութիւնք, և ո՛չ ալ դանդաւանք :

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — (Խորհրդ. Տեսես, գործոց) Ձեմ գիտեր թէ Ատենագրութիւն էֆէնտին երբ կըսէ որ ժողովոյ վերաբերեալ գրութիւններն համբակներու ձեռք ձգուած են դիւանատան մէջ, այդ խօսքով որո՞ւ կանխարկէ . մի թէ՛ վարչութեան դէմ գանգատ մ'է այս . ես կը փափաքէի որ Ատենագրութիւն էֆէնտին գանգատելու պատճառ մ'ունէր, փոխանակ յատենի ժողովոյ գանգատելու, ամենապարզ դիտողութիւն մ'ըրած ըլլար վարչութեան՝ զի անտարակոյս ամեն ինչ կը կարգադրուէր անմիջապէս, և հարկ չէր մնար այս խօսքերուն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յայտարարեցի արդէն թէ Մայր դիւանը վարչութեան հետ համաձայնած է ատենագրութեանց պատրաստութեան վերաբերեալ կարգադրութեանց մասին, և թէ յուսով է որ այսուհետև նախորդ զրժուարութիւնը կը բարձուին ի միջոց :

Արդ՝ եղած դիտողութեամբք հանդերձ

բուէի կը դնեմ ժԸ նստին ատենագրութեան ընդունելութիւնը:

Ժողովը ԿԸՆԳՈՒՆԻ ԺԸ. նստի ատենագրութիւնն հանգերձ գիտողութեամբ:

2.

Բացակայութիւնը

Երեսօրհաններէն Մարուգէ էֆէնտի Ֆրէնկեան ճամբորդութեան պատճառաւ,

Տ. Կարապետ եպիսկոպոս Սերոբեան և Մելքոն էֆէնտի Իսկէնտէրեան անձնական տկարութեան պատճառաւ իրենց բացակայութիւնը գրով յայտնած լինելով՝ Ատենագրութիւնը սոյն օրինական բացակայութիւններն ժողովոյն ծանուցանելէ ետեւ, նշանակել տուաւ ներկայութեան տուժարին մէջ:

3.

Գիր Համարակարգեան ղիւանին Կեդր. սընտուկին 1877-78, 1878-79 և 1879-80 տարիներու հարուէկըսոց վերաբերութեամբ.

Ատենագրութեան ղիւանէն գիր մը ընդունած է, կընթեանու զսոյն ժողովոյն, որ ահաւասիկ.

Մեծապատիւ Ատենագրութեան էֆէնտի Ազգային Ժողովոյ

Համարակարգութեան Գիւանս ստացաւ 1877—78, 78—79 և 79—80 ամաց Կեդրոնական սնտուկին հաշուեցոյցներն, ընդ որս և արգի վարչութեան Տնտեսական խորհրդականին մէկ տեղեկագիրն, որով յիշեալ խորհրդական է.

Ֆէնտին կը յայտարարէր թէ՛ «Արգի վարչութիւնն պարտաւորութիւն յանձն առեր է երկր ամաց հաշուեցոյցներն պատրաստել և այնու ընու հաշուական անջրպետն, առանց պատասխանատու լինելու այդ երեք տարւոյ գանձային և հաշուական գործողութեանց»:

Իրաց այս վիճակին մէջ Գիւանս նկատելով թէ այդ մատուցեալ հաշուեցոյցներն իրենց բուն պատասխանատու մարմնոյն կողմէն ստորագրեալ չեն,

նկատելով թէ Գիւանս իր նախաքննական պաշտօնը կատարելու ատեն թերեւս պէտք ունենայ պատասխանատու մարմնոյն բացատրութիւններն լսելու.

Կառաջարկէ

Յանձնարարել Ս. Պատրիարք Հօր, որ սոյն երեք ամաց հաշուեցոյցներն նոյն ժամանակի Գաղաքական Ժողովոյ ստորագրել տալով մատուցանէ Ազգային Ժողովոյ ի քննութիւն:

20 Մարտ 1884 Ատենագրութեան Համարակարգեան ղիւանի Յ. ԱՐՇԱԿ

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս լսեցիք Համարակարգութեան ղիւանը նկատելով որ 77—78, 78—79 և 79—80 ամաց հաշուեկիտներն իրենց ժամանակին վարչութիւններէն չեն ըստորագրուած, կառաջարկէ յանձնարարել Ս. Պատրիարք Հօր որ զանոնք ստորագրել տալով պատասխանատու մարմնոց վերադարձնէ: Այս մասին կարծիք յայտնել ուզողներն կըրնան խօսիլ:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՅ. — [Տնտ. գործոց խորհրդական] Նախորդ վարչութիւն մ'ունէինք որ հեռացեր է առանց հաշի տալու. ներկոց վարչութիւն մը աւելին որ նախորդին պահտը կը լեցնէ: Իրաւ է որ ներկոց վարչութիւնն իւր նախորդին հաշուոց պատասխանատու չկրնար լինիլ ինչպէս որ նախորդն ալ չկրնար պատասխանատու ըլլալ այն հաշուեկիտոց պատրաստութեան, զոր ներկոցն կը բերէ: Եթէ լու ուշադրութեան առնուած է տեղեկագիրն, անոր մէջ ըսուած է թէ վարչութիւնս պատասխանատու չէ այդ երեք տարւոյ գանձային և հաշուական գործողութեանց. սակայն երբ այդ հաշուեկիտներն ներկոց վարչութիւնս կը բերէ և անոնց ճշգրտութիւնը կը վաւերացնէ, ասիկոց ըսել չէ թէ ներկոց վարչութիւնս այդ հաշուեկիտոց մանրամասնութիւնը կը վաւերացնէ, այլ ատով անոնց՝ տուժարներուն ճշգրտ սրտկերացումն լինելը կը հաստատէ: Եւ երբ ներկոցն զանոնք կը սրտարատէ և կը բերէ, անպատեհ է ըսել թէ նախորդը թող ստորագրէ, զուցէ նա տարբեր կերպով պիտի սրտարատէր ու մեկնէր այդ հաշուեկիտները:

Վարչութիւններն միմեանց յաջորդելով իրարու թերին կը ընուն. արդ ինչ որ չէ ըրած նախորդ վարչութիւնն՝ ներկոցն զսոյն կատարեց և այսպէս բերաւ այդ հաշուեկիտները: Թէպէտեւ ներկոց վարչութիւնս, ինչպէս ըսուած է իւր տեղեկագիրն մէջ, կը փափարէր նախորդ վարչութեանց հաշուոց մանրամասնութեան քննութիւնը ամբողջապէս կատարել և սպա նոցս բախանդակութիւնը պատկերացնել, բայց նկատելով որ Ազգային Ժողովս ստիպողութիւն կուտայ հաշուեկիտոց մատուցման՝ ստիպուեցաւ զանոնք ժողովոյն ներկայացնել ասոնց անոնց մանրամասնութեանց ճշգրտութեանը պատասխանատու լինելու: Եթէ այդ մանրամասնութեանց մէջ սխալներ կան, Պատրիարքարանի տուժարները բաց են և անոնցմէ կրնար ստուգել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ինչ որ ըսաւ Տընտեսական խորհրդական էֆէնտին խորհրդարանական կեանքին բոլորովին հակառակ է: Պատասխանատու չեմ ըսաւ հաշուական գործողութեանց. եթէ պատասխանատու չէ՛ ի՞նչ է ուրեմն: Մեզ հաշուեկիտներ կը բերէ և պատասխանատու չեմ կըսէ. ուրեմն պէտք է թողու որ անոնց պատասխանատուն դռնեմք. հաշի մը ներկոցել ժողովոյ քննութեան և անոր պատասխանատուն չլինողել, աս հակասահմանադրական է: Եւ ի՞նչպէս կարելի է մեզ քննել ստուգել հաշի մը երբ անոր պատասխանատուն չկոց: Ներկոց վարչութիւնը քննել կուզէ եղեր նախորդին հաշիները, թող քննէ, մեք բան չենք ըսեր. բոցց միթէ ներկոց վարչութիւնն է նախորդին համարաւուն, և ո՞ր վարչութիւնն է որ առանց իւր հաշիները տալու կրնայ առնել քաղել: Սրբազան Պատրիարքը պէտք է որ նախորդին օձիբը բռնէ: Մէլիքեան էֆէնտին ալ փոխանակ իւր նախորդին գործերովն զբաղելով և տնտեսականի գրասենեակը խել մը համարակալներով լեցնելով իւր ժամանակն անցեալ գործերով վատնելու և ծախսոց դուռ բանտլու, լաւ կընէ եթէ իւր օրին գործերովն զբաղի: Եզրակայնելով կը կրկնեմ, երեք տարուան հաշիներ կան ժողովին ձեռքը, բոցց անոնց պատասխանատու մարմինը չկայ. ժողովը արժան կը գտնէ՞ միթէ պատասխանատու չճանաչել նախորդ վարչութիւններն իրենց պաշտօնավորութեան ժամանակի հաշիներուն, և միթէ սրտարատը չէ՞ն զանոնք ստորագրելու: Աստի կը խնդրեմ որ Համարակարգութեան ղիւանի կառաջարկութեան համեմատ յանձնարարուի Ս. Պատրիարք Հօր որ հրաւիրէ յիշեալ հաշուոց պատասխանատու մարմիններն ստորագրել զանոնք:

ԳԱՐԱԳԱՇ Կ. ԷՅ. — Մինչև մէկ աստիճան ճիշդ են Պատրիարքեան էֆէնտի խօսքերը, սոյններն թէ աններելի և մեծ թերութիւն մ'է

Վարչութեան մը թողուլ երթալ առանց իւր հաշիւները տալու . Սակայն Փախաղեան է ֆէնտին կըսէ թէ այս վիճակին մէջ քննութիւնըն ուլ անկարելի է . բայց այնպէս չէ . Տնակ սական խորհրդակիսն էֆէնտին մանրամասն քննութիւնը թո՛ղ փութացնէ և այդ հաշուոց պատկերացման հետ ներկայացնէ ժողովոյս որ զրկենք Համարակալութեան զիւանին :

ՄԷԼԻԻՔԵԱՆ Գ. ԷՅ. — Ժողովին եկածը հաշուոց պատկերացում մ'է . կարծեմ թէ Փախաղեան էֆէնտին չէ կրցած լուս ըմբռնել իմ խօսքս . ես բաժնած էի երկու կէտերն , որք են հաշուակիսն գործողութիւնը և հաշուեկշիւոյս հաշուեկշիւոյն պատրաստութեան նախորդ Վարչութիւնը պատասխանատու չէ , որովհետեւ հաշուեկշիւը ներկայ Վարչութիւնը պատրաստեց բերու և անոր պատրաստութեան պատասխանատուն ինքն է , հետեւաբար շառաջարկուիր նախորդ Վարչութեան ստորագրել մեր պատրաստած հաշուեկշիւն . թերեւս ըսէ թէ՛ ես տարբեր կերպով պիտի պատրաստէի զայն : Որովհետեւ Համարակալութեան զիւանն կառավարիչ նախորդ Վարչութեան յղել այս հաշուեկշիւներն ստորագրելու համար , իմ խօսքս ատոր դէմ է : Ժողովը ազատ է զրկելու կամ չզրկելու , միայն թէ այդ գործողութիւնն ինչ եղանակաւ պէտք է կատարուի , խնդիրը հոն է : Հաշուեկշիւները պէտք է հոս մնան , և նախորդ Վարչութիւնները կանչելով ըսենք . ահա ձեր երեք տարուան հաշիւներն : Ժողովը կը ըսէ դանոնք և եթէ գոհ չլինի անոնց տալիք պատասխանէն , կը յղէ խնդիրը Վարչութեան կամ դատարանին և վերջնական վճիռն ինք կարծուի . այս է օրինական ճանրան և տհա այս է իմ ըսածս :

Փախաղեան էֆէնտին ուրիշ շատ խօսքեր ալ ըրաւ , որք խնդրէն դուրս էին , ուստի առանց հարկ չեմ տեսներ պատասխանել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դեռ տեսնական գործողութեանց մէջ եմք , որոնց համար մէկ

ժամէն աւելի պէտք չէ գոհեմք , ըստ մեր կանոնադրի , վասն զի Օրակարգի խնդիրներն ետ կը մնան : Ուստի ամիտիւնք վիճարանութեանց եզրակացութիւնները :

Ըստ ըմբռնման Դիւանիս տարբերութիւնը ձեւակիսն կէտի մը վրայ է , և ոչ թէ խընդրոյն սկզբան : Չի խնդիր մը միայն կը տեսնեմ ես : Համարակալութեան զիւանն երեք տարուան հաշուեկշիւներ ունի իւր քննութեան յանձնուած , զորս ներկայ Վարչութիւնը նախորդին ժամանակի հաշուետուժարներէն քաղելով պատրաստեւ ու բերեր է : Համարակալութեան զիւանն որ զայն պիտի քննէ , կերակի թէ թուանշաններու խնդիր չէ փնտռածն , այլ բացատրութեանց , ուստի և պատասխանատու անձինքը տեսնել կուզէ իւր դէմ , և հետեւաբար կառավարիչ նոյն ժամանակի Վարչութեանց ստորագրել տալ հաշիւներն : Տնագործոց Խորհրդակիսն էֆէնտին՝ ըստ որում հաշուեկշիւները ներկայ Վարչութեան ձեռք պատրաստուած՝ սպորէն կը տեսնէ այս առաջարկը , զի ոչ որ իւր չպատրաստած հաշուեկշիւոյն պատասխանատուութիւնն ստանձնելու կրնայ հրախրուիլ : Միանգամայն թերևս վըստահութեան հակառակ կը գտնէ իւր պատրաստած հաշուեկշիւներն ստորագրող փընտուելը : Բայց այս կասկածանայ տեղի չկայ , վասն զի ներկայ Վարչութիւնը լուս գործ մ'ըրած է միշտ անցեալ հաշուոց բաղաւածը հաշուետուժարներէն հանել և ժողովիս բերելով : Ժողովը կասկած մը չունի որ այդ հաշուեկշիւները հաշուետուժարաց ճիշդ ամիտփումն եղած չըլլան , և հետեւաբար կը կարծէ թէ նախորդ Վարչութիւնը ալ զայն ստորագրելէ խուսափելու պատճառ չեն կրնար ունենալ : Եւ եթէ չուզեն ստորագրել , իրենք պարտաւոր են ուրիշ հաշուեկշիւ մը պատրաստելու , որ եթէ ուղիղ պիտի լինի , սոյն հաշուեկշիւոց նմանը կըլլայ բնականաբար :

Արդ այս վիճակին մէջ ամենքդ ալ կըրնաք համաձայնիլ որ Համարակալութեան զիւանն իւր քննութիւնը չարունակէ սոսանց կա-

սելու և Ս. Պատրիարք Հայրն հրախրէ նախորդ Վարչութիւններն որ իրենց ժամանակի հաշուետուժարներէն քաղուած հաշուեկշիւները քննեն և եթէ ճիշդ գտնեն , ստորագրեն , ապա թէ ոչ իրենք նոր մը պատրաստեն և տան : Իսկ երբ նախորդ Վարչութիւնը ոչ մին ընեն և ոչ միւսն՝ այն ատեն իրենք զիրենք կը դատաստարեն . բայց այժմէն իրաւունք չէ այդպիսի ենթադրութիւն մ'ընել :

Ուստի ստրահովցներով զներկայ Վարչութիւնն որ Համարակալութեան զիւանին առաջարկն իրեն համար աննպատ խնատ մը չունի , քուէի կը դնեմ զայն հետեւեալ բարեփոխութեամբ :

« Համարակալութեան զիւանն իւր քննութիւնը չարունակելու պայմանու յանձնարարել Ս. Պատրիարք Հօր որ հրախրէ նախորդ Վարչութիւններն իրենց պաշտօնավարութեան ժամանակին հաշիւներն ստորագրել » :

Ժողովը մէկ քուէի դէմ ԸՆԴՈՒՆԵՑ սոյն բարեփոխումը :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Օրակարգին անցնելէ առաջ կ'ս ժամ ալ 57 անոց խնդիրներով

պէտք էր զրոյղել ըստ վերջին կարգադրութեան ժողովոյս , սակայն նկատելով որ ներկայ տարեշրջանին փակուած մտեցած և թաղային մատակարարութեան խնդրոյն , որ այսօրուան օրակարգն է , կարևորութիւնը կարի զգալի եղած է , լուսագոյն կը թուի ինձ թողուլ այսօր 57 անոց խնդիրներն , և անմիջապէս Օրակարգին անցնիլ , որպէս զի մինչև ի փակում եթէ երկու նիստ ևս ընեմք , կարենամք Թաղային օրինաց խնդիրն ըմբռնել այս շրջանին մէջ :

Նմանապէս նախընթաց նիստին առ Վարչութիւնն ուղղեալ հարցմանց պատասխաններն ալ , որոց պատրաստ լինելը Վարչութիւնը ծանուցած է զիւանիս , յառաջիկայ նիստին թողուլ հարկ կը լինի :

Եթէ Ժողովը Համակարծիք լինի Դիւանիս անմիջապէս Օրակարգին անցնելու մասին , սոյն ատեն իւր հաւանութիւնը պիտի խնդրեմ առաջնութիւն տալու համար Մայր զիւանիս սոյն երկու առաջարկութեանց , որ Առննադետոց զիւանէն նախընտրուած և Օրակարգն անցած են , և որոց մին Ժողովոյս գումարման աւուրց փոխփութեան կը վերաբերի և միւսը ժողովոյս ներկայելի գրութեանց : Վասն զի այս երկու խնդիրներն արդէն քիչ ատեն կը զրաւեն , և մանաւանդ անոնց առաջնոյն ընդունելութիւնը՝ նոյն իսկ Թաղային օրինաց խընդրոյն լուծմանը կը նպաստէ , Ժողովոյս գումարման զիւրութիւն ընծայելով :

Երեսփոխանք ԿԸ ՀԱԻԱՆԻՆ Առննադետ էֆէնտին յայտարարութեան , և հետեւաբար նախ յիշեալ երկու խնդիրները ձեռք կառնուին :

Ա.

Առաջարկութիւն Մայր դիւանի ժողովոյ գումարման աւուրց փոփոխութեան մասին.

Ատենապետ Էֆէնտի կընթեանու հետեւեալ տեղեկագիրն.

Մայր դիւանի անդամքս,

Նկատելով որ Ազգային ժողովոյ սովորական նիստերուն համար սահմանեալ ուրբաթ օրերն՝ երրօրական թղթատարին նոյն աւուրց հանդիպելուն պատճառաւ՝ բազմաթիւ երեսփոխանաց անյարմար եղած, և այս մասին քանիցս դիտողութիւններ երևան եկած են.

Նկատելով որ՝ նոյն իսկ իրենց համար ալ՝ այս պարագայն ծանր արգելք մ'է իրենց պաշտօնին կատարման.

Եւ նկատելով որ՝ անձնական այլ և այլ տեսակ դործերով զբաղեալ երեսփոխանաց ամենամեծագոյն մասին համար՝ հինգշաբթի օրերն են յարմարագոյն, կ'առաջարկեմք.

Ժողովոյ սովորական նիստերուն համար՝ ուրբաթին տեղ՝ հինգշաբթի օրերն յատկացնելով, ներքին կանոնադրի 1-երդ յօդուածն ըստ այնմ բարեփոխել.

Նմանապէս՝

Նկատելով որ, Կ. Պօլսոյ բնակութեանց ցրուեալ և առևտրոց հրապարակին ալ Պօլսոյ և Ղալաթիոյ կողմերն երկու գլխաւոր մասերու բաժանեալ վի-

ճակին պատճառաւ, տեղի կայ հաւանականութեան որ նիստերու գումարումները՝ կէս օրէն յետոյ ընելու տեղ՝ կէս օրէն յառաջ ընելն աւելի դիւրութիւն ընծայէ բազմաց,

Կ'առաջարկեմք,

Ժողովոյ նիստերն՝ կէս օրէն երեք ժամ յառաջ սկսելով՝ մինչև կէս օր շարունակելու փորձ մ'ընել, և աւելի յաջող արդիւնք տեսնուած ատեն՝ ըստ այնրմ կարգադրել:

23 յունվար 1881

Ազգային ժողովոյ

Ատենադպիր Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ	Ատենապետ Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ
Դեր-Ատենադպիր Մ. ԶՊԱՆԵԱՆ	Դեր-Ատենապետ Ա. Ա. ՏԻՒՐԻ

Ատենապետաց դիւանս բանաւոր կը դանէ Մայր Դիւանի նկատողութիւնքն, և համամտելով նմա այս կրկին առաջարկութեանց համար, կեղրակայէ ընդունել զանոնք ստիպողաբար, ի դիւրութիւն գումարման ժողովոյ նիստերուն:

25 Յունվար 1881

Չեանհասութեան դիւանի Ատենապետ
Յովհաննէս Բանանայ Մկրեան

Նախածեանութեան դիւանի Ատենապետ
Ղ. Հովուեան

Յարաբերութեան դիւանի Ատենապետ
Մ. Զօպանեան

Բ.

Առաջարկութիւն Մայր Դիւանի ժողովոյ ներկայելի գրութեանց մասին

Ատենապետ Էֆէնտի կը կարգոյ Մայր դիւանի Բ. առաջարկութիւնն որ է.

Մայր դիւանս՝ նկատելով որ ժողովոյ ներկայելի գրութիւնք ընդհանրապէս Ատենանի բացման պահուն՝ և նոյն իսկ Ատենանի բացումէն յետոյ՝ կաւանդուին իրեն, և այս պատճառաւ կը պարտաւորեն զինքն ստէպ իւր ընդունած թղթերն՝ առանց պարունակութեանց վերահասու լինելու՝ ժողովոյն ներկայել:

Նկատելով որ՝ այս պատճառաւ շատ անգամ՝ աւելորդ վիճարանութեանց և ժողովոյ ժամերուն ընդունայն սպառման տեղի կը տրուի.

Կ'առաջարկէ

Յանձնախումբ մը կարգել, որ ժողովոյ ներկայելի գրութիւններն Ատենանի բացումէն յառաջ Մայր դիւանին աւանդելու համար՝ գրութեանց իւրաքանչիւր տեսակի համեմատ՝ միջոց սահմանող օրինաց ծրագիր մը պատրաստէ:

Ազգային ժողովոյ

Ատենադպիր Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ	Ատենապետ Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ
Դեր-Ատենադպիր Մ. ԶՊԱՆԵԱՆ	Դեր-Ատենապետ Ա. Ա. ՏԻՒՐԻ

23 Յունուար 1881

Ատենապետաց դիւանն ի քննին առնելով Մայր դիւանի սոյն առաջարկն ըն-

Համարակալութեան դիւանի Ատենապետ
Ս. Պ. Պ. Փախագեան

Ի դիմաց Իրաւասութեան դիւանի
Տ. Մ. Էրսերճեան

Խմբագրութեան դիւանի Ատենապետ
Կ. Ս. Իսրիւճեան

Կարուծոց դիւանի Ատենապետ
Ք. Ղազարոսեան

(Յետ ընթերցման)

Տ. ՄԱՏԹ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Ներքին կանոնագրին համաձայն ժողովս կարող է միշտ հարկ դատած փոփոխութիւններն ընել, ուստի կ'առաջարկեմ անմիջապէս քուէարկել այս խընդիրն և ընդունիլ: Կը փորձեմք զայն և երբ արդիւնքն անյաջող լինի, այն ատեն նորէն կը փոխեմք:

Հաւանութեան նշաններ կը յայտնուին Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առաջարկութեան, և Ատենապետ Էֆէնտին քուէի զնելով խընդիրը, ժողովը միաձայն ԿԸՆԴՈՒՆԻ Մայր դիւանին առաջարկն և ԿՈՐՈՇԷ:

1. Ժողովոյ գումարման յատկացեալ ուրբաթ օրերն հինգշաբթի փոխել:

2. Փոխանակ կէս օրէն յետոյ գումարուելու՝ փորձի համար կէս օրէն 3 ժամ յառաջ գումարուիլ:

դուներլի գտաւ զայն սկզբամբ . և հե-
տևաբար ժողովոյ ներկայելի գրութեանց
բնութիւնն՝ ըստ յանձնարարութեան ժո-
ղովոյն՝ իմաստասիրելով, զանոնք երկու-
կարգի բաժանեց . և Ատենին բացմանէն
յառաջ Ատենապետին աւանդելու հա-
մար՝ իւրաքանչիւր տեսակին համեմատ՝
հետեւեալ կերպիւ միջոց սահմանել պատ-
շաճ դատեց, զոր ժողովոյդ ընդունե-
լութեան կը ներկայէ .

1. Բացակայութիւն և հրաժարում :
— Ատենի բացումէն մինչև կէս ժամ
յառաջ :

2. Առաջարկութիւն , հարցում ,
խնդրագիր , տեղեկագիր և չն . — Ատենի
բացումէն մինչև մէկ ժամ յառաջ :

25 Յունվար 1881

Ձեռնհասութեան Դիւանի Ատենապետ
Յովն. Քննյ. Մկրեան

Նախաձեռնութեան Դիւանի Ատենապետ
Ղ. Հովուեան

Յարաբերութեան Դիւանի Ատենապետ
Մ. Զօպանեան

Համարակալութեան Դիւանի Ատենապետ
Ս. Պ. Պ. Փափոզեան

Ի զիմոց Իրաւասութեան Դիւանի
Տ. Մ. Էքսերճեան

Կարուածոց Դիւանի Ատենապետ
Ք. Ղազարոսեան

Իմրագրութեան Դիւանի Ատենապետ
Կ. Ս. Իսիւսեան

[Յետ ընթերցման]

Տ. ՄԱՏԹ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Բացա-
կայութեանց համար ատենանին բացումէն մին-
չև կէս ժամ յառաջ միջոց տալը խիստ քիչ
կը գտնեմ , պէտք է որ մինչև ի փակում
նստին ընդունուին բացակայութեանց գրերն ,
որպէս զի փոքրիկ յարազման մը համար ե-
րեսփոխաններ չհրաժարեցուցուին :


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԻ . — Եթէ բացակայութեանց
գրերուն նկատմամբ քիչ լինի կը թուի Մայր
դիւանիս առաջարկած ժամանակամիջոցը , փո-
խանակ զայն մէկ երկու ժամ երկարելու ա-
ւելի լաւ կը լինի չորրորդ բացակայութիւնը
հինգերորդի վերածելը Ներեցէք որ ասոր պատ-
ճառն ալ բացատրեմ . շատ անգամ այնպիսի
անկանոն կերպով կը հաղորդուին այդ բացա-
կայութեանց գրերն , որ դիւանս երբեմն իւր
խղճովն չհամոզուած՝ ժողովոյս ներկայել կը
հարկադրի զանոնք արդի գրութեամբ : Եւ
միթէ՞ երբ երեսփոխան մը՝ երեք բացակայու-
թիւն ունենալէ յետոյ՝ չորրորդ անգամ բա-
ցակայ մնալու բանաւոր պատճառ ունենայ ,
գիտնալով հանգերձ որ եթէ այդ պատճառը
չձանուցանէ , օրէնքը պիտի հրաժարեցնէ զին-
քըն , պէտք չէ՞ որ պարտաւորութիւն զգայ
ունեցած բանաւոր պատճառը ծանուցանել
փութալու : Բայց եթէ երբէք պատահի որ ա-
կանայ յարազում մը տեղի ունենալով իւր
նամակէն որոշեալ ժամէն քիչ մ'ուշ հասնի
Դիւանին ձեռքն , այդ պարագային համար ա-
ւելի բանաւոր է Ձեր Դիւանին խոհակամու-
թեան վստահիլ , քան թէ օրինօք թոյլտու-
թիւն տրամադրել : Ես չեմ կարծեր որ ոչ
որ այս Դիւանին վրայ տրամադրութիւն չունե-
նայ՝ բացառիկ պարագայից մէջ՝ այդպիսի ան-
նըչան յարազմանց կարեւորութիւն չընծաւելու-
նալով կը խընդրեմ ընդունիլ նոյնութեամբ

Դիւանիս առաջարկութիւնը յորում նկատու-
ղութեան առնուած կէտ նպատակին ժողովոյս
օգուտն է :

Ժողովն հաւանելով Ատենապետ Էֆէնտի-
ին բացատրութեան՝ միաձայն կԸՆԴՈՒՆԻ Մայր
դիւանին առաջարկութիւնն և ԿՈՐՈՇԷ որ

1. — Բացակայութիւն և հրաժարում . —
Ատենի բացումէն մինչև կէս ժամ յառաջ .

2. — Առաջարկութիւն , հարցում , խընդ-
րագիր , տեղեկագիր և այլն — Ատենին բա-
ցումէն մինչև մէկ ժամ յառաջ :



Ծրագիր Թաղային մատակարարութեան
օրինաց

Ըստ հրաւիրանաց Ատենապետ Էֆէնտիի՝
Ատենապետաց դիւանին տեղեկարբեր Փափազ-
եան Ստեփան Էֆէնտի բեմն ելնելով , կըն-
թեանու Թաղային մատակարարութեան օրինաց
Ատենապետաց դիւանէն պատրաստեալ ծը-
րագրին վերաբերեալ տեղեկագիրն որ ա-
ւտսիկ .

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի
Ազգային ժողովոյ

Ատենապետաց դիւանն աւարտելով
Թաղական օրինաց Ծրագիրն , կը փու-
թայ զայն մատուցանել Ազգային ժողո-
վոյ ի քննութիւն եւ ի վաւերացումն :

Յայտնի է թէ վարչական կազմակեր-

պութեան օրէնքը հաստատուելէ յետոյ
Ազգային ժողովն ըստ առաջարկութեան
հինգ երեսփոխանաց որ ինիստ թ. 3
հոկտ. 1880 , յանձնարարեց Ատենա-
պետաց դիւանին պատրաստել Թաղա-
յին օրինաց ծրագիրն :

Սակայն Ատենապետաց դիւանն հա-
զիւ ի 19 դեկտ. 1880 իր ամբողջու-
թիւնը գտաւ , եւ փութաց ի պատրաս-
տութիւն ծրագրին , զոր ստորագրեց ի
22 յունվար 1881 :

Սոյն թուականէն յետոյ եթէ պատ-
ճառ մը կար Ծրագրին ներկայացման
յապաղմանն , այն էր վարչութեան կար-
ծիքն կանխաւ առնելու պէտքը :

Յետ լսելոյ վարչութեան դիտողու-
թիւններն եւ ըստ այնմ բարեփոխելոյ
Ծրագիրն , ահա այսօր տպագրութեամբ
մատուցուեցաւ երեսփոխան տեարց :

Սոյն ծրագրին հիմ բռնուած է այն
սկզբունքն , որ հիմ ընդունուեցաւ ար-
դէն վարչական կազմակերպութեան օրի-
նաց . այն է հաւաքական պատասխա-
նատուութեան հետ անհատական պա-
տասխանատուութեան դրութիւնը : Ըստ
այսմ Թաղ . խորհրդոց անգամք ինչպէս
հաւաքապէս նոյն եւ անհատապէս պա-
տասխանատու նկատուելով , իւրաքան-
չիւր թաղական մէն մի պաշտօնի յատ-
կացնել պատշաճ դատուեցաւ . և ասոնց
վրայ հսկող և համարառու լինելու հա-
մար իւրաքանչիւր թաղի մէջ Թաղային
ժողովոց կազմութեան դրութիւնն ըն-
դունուեցաւ , որ արդէն Ազգային ժո-
ղովն սկզբամբ ընդունած է 1876 յու-
լիս 9 նիստին մէջ :

Աւելորդ կը համարվիք տեղեկագրել այն ամեն փոփոխութիւններն, որ փորձառութեամբ տեղի գտած են ինոր ծրագրիս. այդ մասին երբ խնդրուի, պատրաստ եմք հարկ եղած բացատրութիւններն տալ յատենի ժողովոյ: Միայն արժան կը համարվիք ըսել թէ, լուրջ քննութեան և նկատողութեան առնուած են այն ամեն կարծիքներն, որ ասկէ առաջ զանազան ժամանակաց մէջ յայտնուած են ժողովիս մէջ թաղական և վարչական օրինաց վերաքննութեան առթիւ, և ըստ այնմ պատրաստեալ է ներկայ ծրագիրն. զոր կը յուսայ Ատենապետաց զիւանն թէ պիտի գնահատէ Ազգային ժողովն և յետ քննութեան վաւերելով զայն պիտի բարեհաճի յանձնել վարչութեան յանմիջական գործադրութիւն, որպէս զի կանոնաւոր ուղղութիւն մի ստանան թաղական վարչութիւնք, և վերջ գաննն թերեւ այն գանդատանք և դժգոհութիւնք, որք այլ և այլ պարագաներու մէջ լուծուած են թաղական վարչութեանց վրայ ընդհանրապէս:

20 Մարտ 1884

Տեղեկագրեր

Ա. Պ. Պ. Փափագեան

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Ատենապետաց զիւանն տեղեկագիրն՝ վերաբերեալ թաղային մատակարարութեան օրինաց ծրագրին որ արդէն տպեալ զրկուած է առ ամենայն

երեւոյթիս, և զոր անշուշտ սերտած էք, և հեռեւարար պատրաստ Ձեր կարծիքն յայտնելու:

Տ. ՄԱՏԹ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Ազգային ժողովն արդէն թաղային օրինաց էական կէտին վրայ վիճարանած՝ և լուծումն տուած է, այն է թաղերն թաղային ժողովով կառավարելու զրութիւնն, որք իրենց կեդրոնին պատասխանատու լինելով, կընտրեն թաղական խորհուրդներն, և անոնց տարեկան համարն կառնուն. այդ ապահեղրոնացման սկզբունքն արդէն ընդունուած և ներկայ ծրագրին ալ ըստ այնմ լինելով կառաջարկեմ պատրաստուած սոյն ծրագրին ամբողջութիւնն ընդունիլ նախ, և ապա անցնիլ անոր յողուածոց քննութեան:

ԶԱՅՆԵՐ — Ստիպողութիւն կառաջարկենք:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — (Խորհր. Տնագործոց) վարչութիւնս ալ կը կրկնէ ստիպողութիւնը. քանզի թաղային օրինաց հաստատութեան շատ պէտք կը տեսնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թաղային օրինաց ծրագրին ամբողջութիւնն ընդունիլ և անոր ստիպողութիւն ընծայել կառաջարկեն. ստիպողութեան առաջարկը վարչութեան կողմէ ևս կը կրկնուի: Արդէն զիւանն տալին գործը պիտի լինի ծրագրին ամբողջութիւնը քուէի զնել, և յետոյ յողուածոց մի առ մի քննութեանն համար խօսք տալ: Բայց երբ ստիպողութիւնն ընդունուի ժողովէն, այն տոնն հարկ չմնար իրարմէ գէթ մէկ շարաթ միջոց ունեցող նիստերու մէջ երեք որոշումէ անցնելու, այլ զանոնք հետզհետէ կրնամք կատարել:

Արդ՝ ստիպողութեան խնդրանքը քուէի կը գնեմ:

Ժողովը մէկ քուէի զէմ ստիպողութիւն կը յՆԳՈՒՆԻ Թաղային մատակարարութեան օրինաց ծրագրին ընդունելութեան համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն նախ ծրագրին ամբողջութիւնը քուէի կը գնեմ, սակայն պէտք է ծանուցանեմ որ խկական մեծամասնութիւնն ամբողջանալու համար մէկ երեւոյթիս ներկայութիւնը կը պակսի, ուստի պէտք է որ 24 ձայնից միարանութիւն գոյանայ, որոշումն օրինաւոր ըլլալու համար:

Թաղային մատակարարութեան օրինաց ծրագրին ամբողջութիւնը քուէի զրուելով, քսան և եօթը քուէով կը յՆԳՈՒՆԻ զայն ժողովը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թաղային մատակարարութեան օրինաց ծրագրին ամբողջութիւնն ընդունուած լինելով ժողովէն, կանցնիմք յողուած առ յողուած կարգալ զայն ի քննութիւն: Եւ այս պարագային մէջ Գիւանս պիտի հետևի այն դրութեան, զոր ի կիր արկինք վարչական կողմակերպութեան ծրագրին յողուածոց ընդունելութեան պահուն, սոյնինքն Ատենապետի Էֆէնտին յողուած առ յողուած կընթեւուծու ծրագրին մինչև որ զխտողութեան համար խօսք ուզուի և սոյն տոնն նախընթաց յողուածները միանգամայն քուէի կը դրուին ընդունելութիւն, և ապա խօսք կը արուի զխտողութեան ենթակայ եղող յողուածին վրայ:

ԶԱՅՆԵՐ — Այո՛, այո՛:

Հետևապէս Ատենապետի Էֆէնտի կսկսի յողուած առ յողուած ընթեւուծու ծրագրին:

Յօդուած 1. Թաղ մի է այն շըրջանակն՝ ուր կան գէթ յիսուն ընտրողք և եկեղեցի ու վարժարան:

Սոյն յողուածին վրայ զխտողութիւն տեղի չունենար և ժողովը կանցնի յաջորդ յողուածին:

Յօդ. 2. Իւրաքանչիւր թաղ պարտի թաղային ժողով մ'ունենալ, որ համարատու իւր կեդրոնին վարչութեան թաղին գործոց վերին տնօրէնութիւնը կը վարէ, և ընթացիկ գործոց համար՝ առ ինքն համարատու՝ թաղական Խորհուրդ մը կը կարգէ:

Գխտողութիւն տեղի չունենալով՝ Ատենապետի Էֆէնտին կանցնի Գ. յողուածին:

Յօդ. 3. Առաջին յողուածին պայմաններէն զուրկ եղող թաղը՝ մերձակայ թաղի մը հետ կը միանայ. և եթէ այս անկարելի ըլլայ, իւր կեդրոնին մասնաւոր տնօրէնութեան կենթարկի:

ԳԱՐԱԳԱՏ Ե. ԷՖ. — Գ. յողուածին վրայ զխտողութիւն ունիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն քուէի կը գնեմ Ա. և Բ. յողուածներն:

Ժողովը միաձայն հաւանութեամբ կը յՆԳՈՒՆԻ ծրագրին Ա. և Բ. յողուածներն:

ԳԱՐԱԳԱՏ Ե. ԷՖ. — Գ. յողուածին զէմ

ըսելը չունիմ, միայն կառավարիեմ որ Գ. ին հետ միացուի այն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրնայ բանաւոր լինել ձեր առաջարկը. բայց այդ կէտը սարգսպէս խմբագրական ըլլալով՝ Խմբագրութեան ղիւտնին կը սրտականի կարգադրել եթէ ժողովը յետ ընդունելութեան ծրագրին՝ ուղէ յղել զայն յիշեալ ղիւտնին :

Ատենադպիր Էֆէնտին կը շարունակէ ընթերցումը :

Յօդ. 4. Մերձակայ թաղերն՝ ընտրողաց հաճութեամբ՝ կրնան միանալ եւ մէկ թաղ ժողով ընտրել :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ վարչութեան) Հոս բան մը մտայնած է. ընտրողաց հաճութեամբը բիչ մը մտթ է, վարչութեան գործակցութիւնն եւ որոշումը յիշուած չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս ղիտողութիւնն տեղի կուտայ միանգամ յայտարարելու որ Ատենապետաց ղիւտնն այս ծրագրին մէջ զբրտած չէ ինչ որ Հրահանգի կը վերաբերի եւ թողած է որ Կեդր. վարչութենէն տրուելիք կանոնագրով ամբողջանան անոնք եւ ինչպէս կը տեսնէք 12րդ յօդուածը զրտած է յատկապէս ծրագրին մէջ : Վարչութիւնն իրաւունք ունէր այս ղիտողութիւնն ընելու, բայց յիշեցուցած յօդուածս կարծեմ՝ կրնայ սպառնալ ղիւտն : Ի հարկէ ինչ որ օրինական է, առանց կեդրոնին համաձայնութեան չկրնար գործադրուիլ. եւ եթէ այսպէս տրամադրուած ըլլար, անասձման տարակեղծոնացմամբ կատարեալ անիշխանութիւն մը պիտի տիրէր մեր մէջ :

Եւ արդէն ուրիշ շատ մը յօդուածներ կան, որ առանց այդ ընդհանուր կանոնագրի հաստատութիւնը տրամադրելու, անիմանալի կըլլային : Հետեւաբար սկզբուն խնդիր մը չմնար հոս, կարծեմ, եւ կրնամք Ե. յօդուածին անցնիլ :

Ատենադպիր Էֆէնտին կը շարունակէ :

Յօդ. 5. Միացեալ թաղերու թաղ ժողովն կրնայ մէն մի թաղին յատուկ թաղ Խորհուրդներ կարգել, եթէ հարկ տեսնէ :

Առանց ղիտողութեան կանցնի :

Ա.

ԹԱՂԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 6. Թաղային ժողովն քսան եւ հինգ անդամներէ կը բաղկանայ :

ՀԱՂԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Խօսք կուզեմ :

Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ Գ. Դ. եւ Ե. յօդուածներն որք ժողովէն ԿԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ միաձայն :

ՀԱՂԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Ես քսան եւ հինգ թիւը շատ կը գտնեմ, որովհետեւ 50-100 սուտներէ բաղկացեալ ղիւղի մը մէջ շատ դժուար է 25 հոգի գտնել :

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ընդհակառակն ես ալ 25 թիւը բիչ կը գտնեմ, քանի որ հազարաւոր ընտրող ունեցող թաղ մ'ալ պիտի ստիպուի 25 հոգիէ բաղկացեալ թաղային ժողով մ'ունենալ : Ուրեմն կառավարիեմ որ այս թաղային ժողովներն երեք աստիճաններու բաժնուին ընտրողաց թուոյն համեմատութեամբ : Օրինակի համար 25, 50 եւ մինչեւ 100 անդամներէ բաղկանայ թաղային ժողովն ըստ մարդաթուի թաղին :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Հալածեան Բարսեղ Էֆէնտի ղիտողութիւնը կատարելապէս իրաւացի է, Պէշիբեան Էֆէնտիինն ալ մինչեւ մէկ աստիճան իրաւացի. սակայն չեմ կրնար ըմբռնել թէ մեր կազմելիքը թաղային ժողով է, թէ Երեսփոխանական ժողով, մինչդեռ 3 միլիոն Հայոց Երեսփոխանական ժողովն 140 հոգիներէ կը բաղկանայ, կարելի է որ թաղային ժողովներն ալ գրեթէ անոր չափ անդամ ունենան : Ուստի, այս երկու կարծեաց մէջ համաձայնութիւն գոյացնելու համար կառավարիեմ 15 էն 30 թիւերն ըստ տեղւոյն :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կերկրորդեմ Գափամաճեան Էֆէնտիի առաջարկն որ իւր մէջ կը պարունակէ առաջին երկու առաջարկութիւնները : 15 է 30 թիւերը չափաւոր են եւ անկէ աւելին լաւ չէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկաբեր) Ատենապետաց ղիւտնն ճիշդ ձեր առաջարկած սկզբամբ խմբագրած էր ի սկզբան, այսինքն 50 ընտրելի ունեցող թաղին 12, 10) ին 18, 150 ին 24, 200 ին 30 եւ 250 կամ աւելի ընտրող ունեցող թաղերուն համար 36 թիւերը սահմանած էր : Սակայն ղիտէք, Տեարք, թէ որչափ դժուար է այս թիւերն որոշել, եւ իւրաքանչիւր թաղի օրինական թիւերն սահմանել, ժողովուրդն օրինաց պիտի վարժի, պէտք է որ օրէնքն պարզ, միօրինակ եւ

գիւրմբունելի ըլլայ : Ուստի շիտթութեանց տեղի չուալու համար Ատենապետաց ղիւտնն միջին թիւ մը որոշեց, այն է 25 թիւը :

Կրտուի թէ մեծ թաղերու համար 25 թիւը բիչ է, բայց եթէ այդ թաղերն իրենց բազմաթիւ ընտրողաց մէջէն հատընտիրներն դատելով 25 հոգի գտնեն աշխատող, դարձեալ բաւական է, ղի 25 անձանց գործակցութիւնն փոքր միջոց չէ, եւ ասկէ առաջ այդ թաղերն 12 հոգիով կը կառավարուէին ըսող ալ եղաւ թէ այդ 25 թիւն շատ է սակաւաթիւ ընակիչ ունեցող թաղերու համար. այս իրաւացի է. սակայն պէտք է նկատել թէ փոքր թաղերուն մէջ, ուր եթէ նիւթական ոյժն տկար չէ, հսկողութիւնն եւ աշխատութիւնն բազմաց սեփականելն իր օգուտներն ունի, ինչպէս որ ընդհակառակն եթէ նիւթական ոյժն տկար է, դարձեալ բազմաց գործակցութիւնն թաղին նիւթական ոյժը կը յաւելու :

Հանգուցեալ Ռուսիան Էֆէնտին իր ծրագրին մէջ առաջարկած էր փոքր թաղերու համար թէ, քանի ընտրող որ կան, կը կազմեն թաղային ժողովն. իսկ ներկայ ծրագրին 50 ընտրող ունեցող տեղն թաղ կը նկատէ եւ այս թաղին 25 անդամէ բաղկացեալ թաղային ժողով մը կուտայ, որ ըսել է թէ 50 էն 25 ը պաշտոնի վրայ, եւ միւս 25 ը հսկող են անոնց վրայ :

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ. — Քիչ մ'առաջ խօսած ժամանակս լռելիայն բան մ'ուզեցի յայտնել. այն է թէ եթէ թաղին մէջ քննադատուող կարող անձինքն այդ ժողովներէն դուրս մնան, խտովութիւններն միշտ անպակաս կը լինին. այս նկատմամբ էր որ ես այդ թիւը բիչ կը գտնէի, միանգամայն ես անպատճառ 50 կամ 100 թիւերուն վրայ չեմ սնդեր, միայն կուզեմ որ ընտրողաց թուոյն համեմատութեամբ աւելնայ 25 թիւը :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Նկատելու կէտը սա է որ ասկէ առաջ Թաղի մը բնակիչք ընդհանրապէս ինչ ինչ պայմաններով ընտրող էին. ասոնք ինչ իրաւունք որ ունէին, նոյնը պիտի ունենայ Թաղ. ժողովը փոխանորդաբար, այժմ ժողովուրդը փոխանակ համարաութիւնն անձամբ կատարելու, զայն իր կողմանէ ընտրեալ ժողովին պիտի ձգէ. ասկէ առաջ Թաղեցիին էր որ իր կողմանէ Թաղական խորհուրդ մը կ'ընտրէր, այժմ Թաղեցիին Թաղ. ժողով մը պիտի կազմէ եւ սա պիտի կատարէ Թաղ. խորհրդոյ ընտրութիւնը. ասով բնականաբար զործը շատ կը դիւրանայ: Գալով 25 թուոյն, ասկէ առաջ ալ քանի անգամ որ այս խնդիրը բացուեցաւ, միշտ 25 թիւին վրայ համաձայնութիւն գոյացած է եւ կարծեմ թէ այժմ Ատենապետաց զիւանն ալ խոհեմութիւն ըրած է նոյնին համաձայնելով: Ոչ ապաքէն այս Երեսփոխանական ժողովն որ 3 միլիոն Հայոց ներկայացուցիչն է, 140 անձէ կը բաղկանայ, ուրեմն ես կըսեմ թէ 25 թիւը ո՛չ աւելի է եւ ո՛չ պակաս, եւ այս 25 թիւն ընդունիլ կառաջարկեմ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Արդարեւ այս մասին աստը տարիէ հետէ շատ վիճարանութիւններ եղած են եւ 25 թիւն ընդունուած է, սակայն չգիտեմ թէ ինչ հիման վրայ հաստատուած է սա: Գալով այն կէտին թէ 30 տուն ունեցող Թաղ մը 25 հոգի պիտի ընտրէ, էրբ 50 էն 25ը տուններ անդին կը մնայ 25. Եւ որովհետեւ արժանաւորներ պիտի ընտրուին, ասոնք թերեւս ուրիշ ազգային սրտոններու մէջ ալ գտնուին. ուստի չպիտի կրնան ըստ արժանւոյն իրենց սրտոնը կատարել:

Այս պատճառով կառաջարկեմ որ փոքր Թաղերու մէջ 15 անձանցով բաղկանայ Թաղ. ժողովն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փորձով տեսնուած է թէ թիւն որչափ շատ ըլլայ՝ գործերն այնքան

քան դժուար կը ըլլայ. սա համոզմամբ է որ Վարչութեան ձեւն ալ հիմնական ձեւին վերածուեցաւ: Շատ դժուար է Թաղերու վիճակն որոշել. Մայր եկեղեցին այսօր 2000 ընտրողներ ունի. բայց շատ կարելի է որ հետզհետէ պակսին եւ մինչև 5-600 ի իջնէ անոնց թիւն, այն ատեն պիտի ստիպուինք 5-6 ամիսն միանգամ Թաղին բնակչաց թիւն ստուգելու աշխատիլ, եւ ըստ այնմ Թաղ. ժողովոյ թիւն նուազել կամ յաւելուլ: Պէտք է միօրինակութիւն եւ ուղղութիւն տալ գործին. եթէ տարբեր թիւեր որոշենք՝ շատ մը դժուարութեանց պիտի հանգրայնուինք. ուստի փորձի համար երկու չարեաց փաքագոյնն է ընդունելի:

ՁԱՅՆԵՐ — Քուէ, քուէ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մտադիրը կըսէր որ Թաղային ժողովն 25 անդամներէ բաղկանայ: Հարձեան էֆէնտին շատ տեսաւ այս թիւն. Գափամաճեան էֆէնտին 15 էն 30 առաջարկեց, զոր կրկնեց Եւսուֆեան էֆէնտին. Պէշիրեան էֆէնտին մեծ Թաղերու համար քիչ դուռ ծրագրին նշանակած թիւն, եւ համեմատական աստիճանու յաւելուլ առաջարկեց. Իւթիւճեան էֆէնտին ալ ծրագրին տրամադրութիւնը սրտտուանեց: Այս վիճակին մէջ մէկ կողմէն ծրագրին ցոյց տուած 25 թիւը կոյ եւ միւս կողմէն զոնի նուազեցնելու կամ յաւելցնելու կարծիքներն: Թէպէտ այս կարծիքներն իրարմէ տարբեր են, բայց ծրագրին թիւը փոխելու նպատակն ունին սկզբամբ:

Ուստի նախ ծրագրին տրամադրութիւնը քուէի պիտի դնեմ, որպէս զի եթէ մերժուի, այն ատեն քուէի դնեմ թիւերու նուազման կամ յաւելման առաջարկութիւններն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կանոնադրական դիտողութիւն մ'ունիմ, ըստ կանոնագրի բարեփոխումը նախապէս քուէի կը դրուի, ուստի հարկ է նախ իմ առաջարկութիւնս քուէի դնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը կը վստահացնէ զԳափամաճեան էֆէնտին որ իւր ընթացքն կանոնագրին հակառակ չէ, այլ անոր ոգւոյն խիստ համաձայն:

Մրադրին Զ. ԲՈՂԱԾՆ քուէի գրուելով 24 ձայնից որոշմամբ կ'ընդունուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ սրում ժողովն ծրագրոյն տրամադրած 25 թիւն ընդունեց իւր քուէով, հարկ չմնար այլ եւս նուազման կամ յաւելման առաջարկութիւնները քուէարկելու: Ուստի կաղաչեմ որ Ատենադպիր էֆէնտին շնորհ ընէ շարունակել իւր ընթերցումը:

Ատենադպիր էֆէնտին կընթեռնու:

Յօդ. 7. Թաղային ժողովին պարտաւորութիւնն են.

- Ա. Թաղական Խորհուրդն ընտրել.
- Բ. Թաղին ելմտացոյցը սահմանել.
- Գ. Հարցապնդել ի հարկին զԹաղական Խորհուրդն, եւ տարեկան հաշիւ ու համար առնուլ ի նմանէ.
- Դ. Թաղեցի մանկուղոյն նախնական պարտաւորիչ կըթուլթիւն ստանալուն, եւ դպրոցական շրջանն աւարտող կարօտ պատանեաց արհեստ ուսանելուն միջոցները դիւրել.

Ե. Իւր իրաւասութեան ենթարկեալ Թաղային պաշտօնէից վիճակը բարւոքելու եւ ապագայն անդորրելու ջանալ.

Զ. Ամուսնութիւնը քաջալերել.

Է. Թաղին աղքատահամարին եւ տարեկան վիճակադրին պատրաստութեանն հսկել.

Ը. Թաղեցւոյն ընտանեկան եւ ընկերական վիճակը բարձրացնելու, եւ վնասակար սովորութիւններն անհետացնելու փոյթ տանիլ.

Թ. Ի մի բան՝ Թաղին ընդհանուր զարգացման եւ յառաջդիմութեան միջոցներն հոգալ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Չորրորդ պարբերութեան վրայ դիտողութիւն ունիմ: Չորրորդէն սկսեալ միւս պարբերութեանց մէջ, երկու մարմնոց միջեւ իրաւասութեան եւ յարաբերութեան շփոթութիւն կը տեսնեմ, եւ այս շփոթութիւնն ինքնին կը վերնայ երբ 4, 5, 6, 7, 8, պարբերութեանց պարունակութեան համար ըսուի թէ « Թաղային ժողովն այս մասին վերին հսկողութիւնը կընէ »:

ԻՋՄԻՐԼԵԱՆ Գ. ԷՖ. — Ես ալ Գափամաճեան էֆէնտիի համակարծիք եմ փոքր ինչ տարբերութեամբ. այսինքն թէ ամեն բան Թաղական խորհրդոյ յանձնել եւ վերին հսկողութիւնը Թաղային ժողովոյ. եթէ անկէ վեր խնդիր մ'ըլլայ՝ Վարչութեան յանձնել:

ԻՋՄԻՐԼԵԱՆ Ս. Մ. ԵՊԻՍ. — Յրդ պարբերութեան վրայ դիտողութիւն ընելէ առաջ կուղեմ տեղեկաբեր էֆէնտիէն հասկնալ թէ ո՞ր պաշտօնեայք են որ Թաղական խորհրդոյ իրաւասութեան ենթակայ են, քահանայք ալ այդ պաշտօնէից մէջն են:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Տեղեկաբեր) Գափամաճեան էֆէնտիի դիտողութիւնն հիմնապէս տեղի շունի, սխալ ըմբռնումն սխալ տը-

պարտութիւն յառաջ կը բերէ . այլ է պաշտօնն, այլ է սարտաւորութիւնն. Թաղային ժողովոյ պաշտօնն Չրդ. յօդուածին մէջ յիշուած է, թէ թաղին գործոց վերին տնօրէնութիւնը կը վարէ . իսկ այս Դրդ. յօդուածին մէջ Թաղ. ժողովոյ պարտաւորութիւնը գծուած են, եւ ինչպէս որ Ա. Բ. եւ Գ. պարբերութիւնը Թաղ. ժողովոյ պարտաւորութիւնը են, այսպէս Գ. նալ Թաղ. ժողովոյ պարտաւորութիւնն է, թաղեցի մանկուոյն նախնական պարտաւորիչ կրթութիւն ստանալուն եւ դպրոցական շրջանն աւարտող կարօտ պատանեաց արհեստ ուսանելուն միջոցները դիւրել . այս միջոցներն ճարել եւ գտնել Թաղ. ժողովոյ պարտաւորութիւնն է, եւ գործադրելը Թաղ. խորհրդոյ Ե. պարբերութեան մէջ ակնարկուած պաշտօնեայք են թաղին վարժապետն, մըխթարն, քէնեան եւ այլն, եւ ոչ թէ քահանայք . վասըն զի քահանայք Թաղ. ժողովոյ իրաւասութեան ենթարկեալ չեն, այլ կրօն. ատեանին աս ալ պատասխանատու է առ Մատթէոս Աբրահամ :

Արդ այս պաշտօնէից վիճակը բարւոքելու եւ ապագայն անդորրելու ջանքն Թաղային ժողովին կը վերաբերի, եւ գործադրութիւնը Թաղ. Խորհրդին Այսպէս պէտք է հասկընալ Զ. պարբերութեան համար, զի ամուսնութիւնը քաջալերել է, Ե. պարբերութեան համար, զի Թաղին ազգահամարին եւ վիճակագրին պատրաստութեան հսկել է, եւ պատրաստելը Թաղ. Խորհրդին կը վերաբերի . Ը. պարբերութեան համար ալ, թաղեցւոյն ընտանեկան եւ ընկերական վիճակը բարձրացնելու եւ մնասակար սովորութիւններն անհետացնելու փոյթ տանին Թաղ. ժողովին կը վերաբերի, եւ այս մասին Թաղ. ժողովոյ որոշումներն գործադրելը Թաղ. խորհրդոյ . օրինակի համար, խնջոյքներն եւ աւելորդ ծախքերն բաճախու կամ պարզութեան վերածելու տնօրէնութիւնն գործադրելի ըլլալու համար Թաղ. ժողովէն պէտք է գայ, եւ ոչ Թաղ. խորհրդէն :

Այսպէս հասկնալ պէտք է եւ Թ. պարբերութեան համար, որ բոլորովին Թաղ. ժողովոյ

պարտաւորութիւնն է, թաղին զարգացման եւ յառաջդիմութեան միջոցներն հոգալ :

Կը տեսնէք որ խորհիլ եւ որոշելն Թաղային ժողովոյ, իսկ գործելն կամ գործադրելն Թաղ. խորհրդոյ պահուած են : Պէտք է յիշել նաև թէ Թաղ. ժողովներն համարատու են առ Վարչութիւնն. ուստի պէտք է անոնց պարտաւորութիւնըն այսպէս ճշդել, որպէս զի համարաու իշխանութիւնն ալ կարենայ գիտնալ թէ ճշդիւ իրենց պարտաւորութիւնըն կը կատարեն, ինչպէս որ նշանակած է ծրագրին 11. յօդուածն :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ըստ որում տեղեկարար է ֆէնտին բացատրեց թէ եկեղեցական դասը այդ պաշտօնէից մէջ չէ, եւ կը կարծեմ թէ քահանայից վիճակը բարւոքման պէտք ունի . եւ այս ո՞վ կրնայ ընել, եթէ ոչ թաղին ժողովուրդը : Վարժապետաց պէս բահանայք ալ ոչ ներկայ ունին եւ ոչ ապագայ, ուստի կառավարիւմ որ Ե. պարբերութեան մէջ ըստի թաղին քահանայից եւ իւր իրաւասութեան ենթարկեալ Թաղային պաշտօնէից վիճակը բարւոքելու եւ ապագայն անդորրելու ջանալ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ գոհ եմ որ Փափաղեան էֆէնտին իր բացատրութեամբ իմ ըսածներս հաստատեց : Ուսանելու միջոցներն զիւրելը Գործադիր իշխանութեան պաշտօնն է, զոր կը վարէ Թաղ. խորհուրդը . ուստի, այս շիտթութեան առջին անգամը համար, կը կրկնեմ որ վերին հսկողութիւնը բաւերն աւելցուի :

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Ես միայն Ե. պարբերութեան մէջ կը տեսնեմ ուղղակի Թաղ. Խորհրդոյ գործաւորութեանը հոկողութիւն . բայց երբ կը տեսնեմ թէ միջոցները ցոյց տայ՝ այս պարագային մէջ հսկելն միջամտել է :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ես կարծեմ թէ խնդրը պարզուած է Փափաղեան էֆէնտին բացատրութեամբ :

րութեամբ : Վասն զի ինչպէս որ Ատենասպետաց Գիւանը Թաղային Վարչութեանց բարուրումն ունենալով իրեն կէտ նպատակի, ծրագրին տրամադրութիւնները բերած է մեզ . միւս կողմն սկզբունքն եւ նպատակն է որ մեզ ալ խօսիլ կուտայ . եւ այս պատճառաւ է որ աղէկ չթուիր մեզ մի առ մի թուել այդ պաշտօններն, այլ զանոնք տմիտիելով հսկողութեան իրաւունք միայն տալ Թաղ. ժողովոյն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ի պատասխանի Տ. Մատթէոս Աբրահամի սա զիտողութիւնն կընեմ թէ, ինչպէս կրնամ իմ իրաւասութեան ներքեւ չեղող պաշտօնէի մը նիւթական վիճակը բարւոքելու եւ ապագայն անդորրելու ջանալ : Երբ այս ծրագիրը կը պատրաստուէր՝ բոլոր այս կէտերն ուշադրութեան առնուած են : Քահանայից ապրուստի խնդրոյն գալով՝ չեմ կարծեր որ անոնք ամենքն ալ կարօտ ըլլան, մաս մը կայ անոնց մէջ որ լաւ վիճակ ունին . իսկ մաս մը, որ դժբաղդարար մեծ մասն է, կարօտ վիճակի մէջ են : Ասոնց նիւթական վիճակի բարւոքման խնդիրն կը մնայ Կրօնային ատեանին եւ Կրօնական խորհրդական Աբրահամին, այս տեսակէտով ներկայ ծրագրէն դուրս թողուած է :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Տեղեկարար է ֆէնտին բացատրութիւնները չեմ կրնար ըմբռնել, հարկ է մանրամասնութեանց իջնել : Վարչական ամեն ճիւղերուն համար անտուկ կամ գումար յատկացուած է, իսկ Կրօնական ճիւղին համար չկայ : Արդարեւ կուսակրօնից ապագայն վանքն է, եթէ գաւառաց մէջ է, եւ եթէ ՚ի Պոլիս Ազգային Հիւանդանոցն, որ վանք մի ալ է : Իսկ քահանայից որք իրեւ դասակաց տէր ապրուստի պէտք ունին, ապագայն եւ ներկայն պէտք է ապահովել : Եկեղեցին պաշտօնէի պէտք ունի, եւ չկայ . նիւթական խնդիրն է պատճառ, որով շատերը չեն ուղեր քահանայ ձեռնադրուիլ : Ո՞վ կըսէ թէ Թաղ. ժողովն քահանայից վիճակին վրայ որոշում մը

չկրնար ընել . քահանայից հոգևոր պաշտօնն անկախ է Թաղային ժողովէն եւ խորհրդէն . բայց անոնց ապրուստի խնդիրն կրնայ ենթարկիլ Թաղ. ժողովոյ իրաւասութեան . ըստ այսմ Թաղ. ժողովն հարկ տեսած տնօրէնութիւնը կընէ . օրինակի համար, եկեղեցի մը կրնայ հինգ քահանայով բաւակրանանալ, երբ քահանայ մը մեռնի՝ անոր տեղ նոր ընտրութիւն կընեն քահանայից խորհրդով եւ նորեկին կը յատկացնեն մեռնողին ծուխերն . մինչդեռ այժմ մնացեալ քահանայք իրենց մէջ կը բաժնեն այդ ծուխերն եւ նորեկին բան չեն ձգեր : Այսպէս քահանայից հոգևոր պաշտաման նուէրներ յատկացնելու եւ անոնց դանձման հոգ կը տանին Թաղ. խորհուրդը . որով դէժ կը դիւրանայ ըստ կարելոյն անոնց ապրուստը, եւ կը բարեկարգի քահանայից վիճակը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փակման ժամը մերձեցաւ եւ կը թուի թէ չսխտի կրնար համաձայնիլ այս Դրդ. յօդուածին վրայ, երեսփոխանը ալ մեկնելու տրամադիր են, ուստի պիտի ընդհատեմք վիճարանութիւնն, շարունակութիւնն յաջորդ նիստին թողուլ :

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Խնդիրը լուծուածի պէս է, զի ամեն որ իրար հասկըցան, ուստի կրնամք համաձայնիլ :

ԶԱՅՆԵՐ — Այո՛, այո՛, սխտի համաձայնիմք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կը խնդրեմ որ Երեսփոխան Տեառք բանի մը վայրկեան համբերեն եւ չմեկնին, որովսզի օրինական թիւը չխոտորի, եւ խօսքը տեղեկարար էֆէնտին կուտամ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարար) Երբ կընդունուի քահանայից նիւթական վիճակը Թաղային ժողովոյն իրաւասութեան ենթարկելն, այն ատեն խնդիրը կը փոխուի . երբ Թաղ. ժողովն անոր դրամական խնդրոյն վրայ ազդեցու-

Թիւն ունենայ՝ անոր բարոյականին վրայ ալ հունենայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դրդ յօղուածն որ Թաղ- ժողովին պարտաւորութիւնը կը գծէ, զիտո- ղութեանց ենթակայ եղաւ, սակայն ըստ վեր- ջին յայտարարութեան համաձայնեցար : Ուստի այնպէս կը հասկնամ թէ միայն Ե. պարբերու- թեան մէջ քաջանայից վիճակի և ապագայի խնդիրը յաւելուլ հուզէք, զանոնք ալ՝ բայ ՚ի հոգևոր պաշտամանէ՝ Թաղ. ժողովոյ իրաւա- սութեան ենթակայ նկատելով : Ուրեմն այս պարբերութեան մէջ իւր իրաւասութեան Են- քարկեալ բառերն աւելորդ կը լինին, և կրնար սա բարեփոխման համաձայնիլ : « Թաղին քա- ճանայից և Թաղային միւս պաշտօնէից վիճակը բարւոքելու և ապագայն անդորրելու ջանալ : »

Տ. ՍԻՄԵՈՆ ԵՊԻՍ. ՍԷՖԵՐԵԱՆ.— (Խորհրդ- դական կրօնական գործոց) Քաջանաներէն զատ ամուսնացեալ սարկաւազներ ալ կը գտնուին, որ Թաղին եկեղեցւոյն կը ծառայեն, պէտք է անոնց վիճակին ալ հոգ տանիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Եւ միթէ այդ սարկա- վազութիւնը մնայուն պաշտօն մ'է՞ թաղերու մէջ, թէ առժամեայ :

Տ. ՍԻՄԵՈՆ ԵՊԻՍ. ՍԷՖԵՐԵԱՆ — Այն սարկաւազներուն շատերը վերջը Թաղին հա- մար քաջանայ կը ձեռնադրուին :

ԶԱՏՆ ՄԸ — Ուրեմն « Թաղին եկեղեցա- կանայ » ըստի բարեփոխման մէջ :

Այս միջոցին երեսփոխանաց մէջ շփոթ մի կը յառնէ և պահ մ'ատեանը կը խանդարի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Շփոթութիւնը հանդար- տեցնելէ յետոյ) Յայտնուած կարծիքնե- րուն և ըստ այնմ ձեզ ներկայուած բարեփոխ- ման խմատն այն է՝ որ Թաղ. ժողովը պարտա- տրութիւն պիտի ունենան ջանալու որ Թաղին

քաջանայից վիճակն ալ բարւոքի և ապագայն անդորրի : Եթէ այդ սարկաւազներն ալ առ ժամեայ պաշտօնեայներ չեն և ըիջ մ'ատեն սարկաւազութիւն ընելէ յետոյ քաջանայ սի- տի ըլլան Թաղին, այն ատեն իրենք ալ պիտի վայելեն Թաղ. ժողովոյ այն խնամքը որ պիտի տարածուի Թաղին քաջանայից և պաշտօնէից վրայ : Ուրեմն ճանչելով հանդերձ կրօնական գործոց Գեր. Խորհրդականին զիտողութեան կարեւորութիւնը, կրնար այժմ՝ շփոթութիւնը բառնալու համար՝ քուէարկել ներկայած բարե- փոխումն, թեթեւ զոհողութիւն մը բեռնաւո- րելով այդ սարկաւազաց վրայ, այսինքն թողե- լով որ մի քանի տարի վերջը քաջանայ եղած աստենին օգուտ բաղեն Թաղ. ժողովոյ վերջ- յիշեալ պարտաւորութենէն :

Եւ հետևապէս Ատենապետ էֆէնտի քը- լէի կը դնէ ծրագրին Դրդ յօղուածը, Ե. պար- բերութեան հետևեալ բարեփոխմամբն « այ- սինքն « Թաղին քաջանայից և Թաղային միւս պաշտօնէից վիճակը բարւոքելու և ապագայն անդորրելու ջանալ : »

Ժողովը սոյն բարեփոխումով ԿԸՆԴՈՒՆԻ Դրդ յօղուածն, օրինական մեծամասնութեամբ :

Փակման ժամը հասած ըլլալով Ատենա- պետ էֆէնտի կը դադրեցնէ Թաղ. օրինաց ծը- րագրին ընթերցումը, և ուրախութեամբ յայ- տարարելով թէ այս անգամ ո՛չ երրորդ և ո՛չ չորրորդ բացակայութեանց ցուցակ ունի ժողո- վին ներկայելու, կառաջարկէ յաջորդ նիստը յառաջիկայ հինգշաբթի օրը գումարել, որպէս զի մինչև փակում ուրիշ նիստ մ'ալ գումար- ուի և Թաղ. օրինաց ծրագրին, Եթէ կարելի ըլլայ, աւարտի :

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ այս կարգադրութեան, և ատենանը կը փակուի ժամ 10 1/2 ին :

Ատենադպիր Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ



ԺԿԿԵՆՈՒՄԻՆՈՂՅՐ

ԳՅԳԻՆՈՒՄԻՆՈՂՅՐ

Մասնակցութեամբ յայտարարուած քաջանայից և Թաղային միւս պաշտօնէից վիճակը բարւոքելու և ապագայն անդորրելու ջանալ : 87-88 և 88-89 տարիներու համար : 87-88

ՔՂՄՄԳՅ

Ստորագրողներ : Կ. Մ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

ՔՂՄՄԳՅ

ԵՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄ

ԵՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄ

Ստորագրողներ : Կ. Մ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ, Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ, Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն ժ.Ն. ժ.Զ. ժ.Է. եւ ժ.Ը. նիստերու ատենագրութեան :
2. Բացակայութիւն երեսփոխանաց :
3. Գիր Համարակալութեան դիւանին կեդրոնական անտուկին 877—78, 78—79, 79—80 տարիներու հաշուեկշռաց վերաբերութեամբ :

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Առաջարկութիւն Մայր դիւանի Ազգ. ժողովոյ գումարման աւուրց նկատմամբ :
- Բ. Առաջարկութիւն Մայր դիւանի Ազգ. ժողովոյ ներկայելի գրութեանց մասին :
- Գ. Մրազիր թաղային մատակարարութեան օրինաց :

Գիւն 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՄԽՈՒՅ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ Բանկայը եւ Հայ գրավաճառաց քով